չանկաւ ձեռքիս։ Օսմանցու դուռն լաւ գիտեմք, ով որ դրամով գնայ՝ բանն չուտ կու շինվի։ Տեսի՝ որ այլ կերպիւ հնար չեղև, դուք այլ մնացիք այդպէս խեղճ պարտատիրաց ձեռքն, վասն որոյ զայս հնարեցայ. ճիհէնէմէ զիւր գլուխն, գայ տեղս, հաշտութիւն մի լինի, կէս մի պարտուց ճարէ տայ, կէս մի այլ գրսէ աստի անտի ժողովք նուիրակութիւն առնելով՝ ազատութեան հնար մի գտանեմք. մանաւանդ որ աշխարհ ամենայն ի վրդովմանէ կու ազատի։ Հիմա քանի որ այս աղմուկս իմէջիսն կայ, թէ հրեշտակ Աստուծոյ գնայ, երկու փող մէկէ մի ուզելու ճար չկայ, և թէ տեղայ մի պարտք անելու ջանամք՝ հինգ դուշ. մարդ չի աւտար տալու։ Ոչ միայն պարտք, այլ և բազում տեղիք կայ, որ զգանձանակն հետ կու պահեն չեն իտար, որպէս որ ահա Տիարպէքիր չորս հինգ տարէն գանձանակ գայ, փող չեն ուղարկեր ոչ ինձ և ոչ նորա, ասելով՝ թէ մինչ որ մէկ դիհ չեղնայ կամ խաղաղութիւն՝ փող չեմք իտար։ Ահա՛, սիրելի՛ք իմ, այսքան խոնարհիլն և խաղաղութիւն խնդրելն այդ պարտուցն համար է և զձեզ ազատելու ի պարտուցն։ Եւ եթէ՝ թէ մեք քեզանէ սըխալթով դրամ չեմք ուղեր, սաթրն դու զնա մի՛ մօտեցներ այդ կերպիւն. ինձի գիր գրեցէք, որ ես այլ ամուր կենամ, զնա չի մօտեցնեմ։ Այնչափ միտք ու ֆիքր արարի, քան զայս առաւել ճար չի գտի. եթէ դուք այլ իմն կերպ ճար կու գիտէք, ասացէք զի արարից։ Եթէ իւրեան կորցընելու ճար կենար, իսկի կոծ չէր, Աստուած ողորմած էր. այնուհետեւ թէ ուստի որ պարտք ու փոխ դրամ ուզէաք՝ թէ՛ ֆռանկաց, թէ յունաց և թէ թուրքից՝ կու տային։ Բայց այժմ ամենեցուն բերանն կայ՝ թէ նա քանի ասկի արծաթ ունի, վաղն կու գնայ՝ կ'առնէ կու գայ, ասելով, մէկ ըստակ չեն իտար։ Վասն որոյ զայս իմացայ հնար. եթէ դուք այլ իմն չահաւէտ խրատ կու գիտէք՝ արարէք զմեզ խելամուտ և ես հետևեցայց խորհրդոց ձերոց։ Ահա այժմ այսուհետև մտօք սպասեմք գալստեան նորա. և եթէ Աստուած տնօրինէ որ գայ, մինչ կերպիւն խօսք որ զրուց որ լինիենայ ի մէջ մեր, նա՛ այն կերպիւն փութով ծանուցանեմք առ ձեզ։ Մանաւանդ որ հոգևորտիրին մարդ կ'ուղարկեմք, որ Իզմիրու և ի քաղաքէդ ուխտաւորք ժողովէ գայ այս տարվս Երուսաղէմ և լինի կատարեալ օէր և հաշտութիւն և դադարի աշխարհ ի վրդովմանէ։ Մեր միտքն այս է՝ թէ գայ, ապա թէ ստէ, այսուհետև այլ իմն խորհուրդ, զոր ինչ պատշաճն է, խորհեալ չուտով առ ձեզ կու գրեմք։ Թիստ որ երկարէ՝ մինչ Վարդապետ յայտնի կու լինի թէ ինչ կերպ որ լինելոց է։ Բայց դուք զտեղւոյդ որպիսութիւնն, կամ թէ Յակոբ վարդապետն Իզմիր զի՞նչ գործ յառաջեցոյց՝ մի ըստ միոջէ գրեսջիք և զհոգևորտիրի ինչ բանի վերայ լինալն և զայլն ի կարգի ծանուցէք։ Դարձեալ հարկ դնէք հոգևորտիրին վերայ, որ ամենայն աշխարհք զիր թող գրէ հրաւիրական՝ թէ ես Երուսաղէմ կու գնամ, դուք այլ որչափ երևելի տաւլաթավորք կայք՝ գայք այս տարի Երուսաղէմ, մանաւանդ յԱրևելից աշխարհն։ Թո՛ղ թէ խաղաղութիւն լինի չլինի, թող հոգևորտիրի գիրն այլ գնայ։ և թէ լինի խաղաղութիւն ըստ մերոյ կամացն՝ նա՛ մեք ևս կու գրեմք աստի յամենայն տեղիս գիր։ Մինթէ բարերարն Աստուած զբարին առաջնորդեսցէ և կամք իւր օրհնեալ եղիցի. ամէն [1667]։

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

ՆՈՐ ՊԱՇՏՕՆՆԵՐ

Ս. Աթոռոյս մէջ, պաշտօնի հեռանալ փոփոխութիւններեր տեղի ունեցան անցեալ ամիսներու ընթացքին։ Հոգ. Տ. Շնորհք Վրդ. ընտրուած ըլլալով անդամ Տնօրէն ժողովոյ Հայֆայէն վերադարձաւ վանք. իր տեղ Հոգևոր Հովիւ նշանակուեցաւ Տ. Յուսիկ Վրդ., Ս. Հրիշտակապետաց վանուց նախկին տեսուչը։ Այն վանուց տեսչութիւնը յանձնուեցաւ Բեթղեհէմի վանուց տեսուչ՝ Տ. Սուրէն Վրդ.-ի, որուն տեղ նոյն հաստատութեան տեսուչ նշանակուեցաւ Տ. Միւռոն Վրդ., Տնօրէն ժողովոյ նախկին անդամներէն։ Հայֆայի Եկեղեցւոյ ժամարար զրկուեցաւ հայերէն թղթակցութեանց դիւանադպիր Տ. Յակոբ Աբեղայ՝ Տ. Շահէ Աբեղայի տեղ. որուն փոխանցուեցաւ հանդերձապետութեան պաշտօնը՝ Տ. Տրդատ Վրդ.-ի հրաժարումով։ Տ. Հրազդան Աբեղայ հրաժարած ըլլալով ժառ. Վարժ.-ի փոխտեսչութեան պաշտօնէն, կոչուեցաւ թարգմանութեան պաշտօնին Տ. Պօսակ Վրդ.-ի տեղ. որ անդամ ընտրուած էր Տնօրէն ժողովոյ։ ժառ. Վարժ.-ի փոխ-տեսչութեան պաշտօնին կոչուեցաւ Տ. Զաւէն Աբեղայ, որուն տեղ մատակարար նշանակուեցաւ Տ. Կոմիտաս Աբեղան։

digitised by A.R.A.R.@